ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵ

Ն Ա Խ Ա Գ Ա Հ

Հ Ր Ա Մ Ա Ն

«11» սեպտեմբերի 2024 թ. N 77-Ա

ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԼԻՑԵՆԶԻԱՅԻ ԵՎ ՆԵՐԴԻՐԻ ԿԱՍԵՑՄԱՆ ՎԵՐԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Լիցենզավորման մասին» օրենքի 34-րդ հոդվածի 7-րդ մասով, Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի N 748-Լ որոշմամբ հաստատված հավելվածի 16-րդ կետի 2-րդ ենթակետով և հիմք ընդունելով «Էներգետիկայի գիտահետազոտական ինստիտուտ» փակ բաժնետիրական ընկերության 2024 թվականի սեպտեմբերի 2-ի Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտե ներկայացված եռամսյակային հաշվետվությունները

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Հայաստանի Հանրապետության տարածքում քաղաքաշինության բնագավառի «Էներգետիկայի գիտահետազոտական ինստիտուտ» փակ բաժնետիրական ընկերության շինարարության որակի տեխնիկական հսկողության № 17319 լիցենզիայի և էներգետիկ ոլորտի № 17319-04 ներդիրի գործողության կասեցումը համարել վերացված 2024 թվականի սեպտեմբերի 2-ից:
2. Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեի լիցենզավորման վարչության պետ Նշան Մարտիրոսյանին՝ ՀՀ լիցենզիաների միասնական էլեկտրոնային գրանցամատյանում կատարել համապատասխան փոփոխություն:
3. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում այն ընդունելու մասին հրամանում նշված իրավաբանական անձանց իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

11.09.2024

X

ԵՂԻԱԶԱՐ ՎԱՐԴԱՆՅԱՆ

Signed by: VARDANYAN YEGHIAZAR 2614790133

Ե. ՎԱՐԴԱՆՅԱՆ